



N 17-22
03.04.2017

ՀՀ արդարադատության նախարար
Արփիինե Հովհաննիսյանին

ԸՆԹԱՑԻՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի Արփիինե Հովհաննիսյան,

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների Խմբի անդամներ՝ Արման Սահակյանը և Հասմիկ Հարությունյանը 2017 թվականի ապրիլի 2-ին այցելություն են կատարել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ և ցանկացել են դիտարկել 95 խցի պայմանները և հանդիպել մի քանի դատապարտյալների: ՔԿՀ-ի աշխատակիցները տեղեկացրել են, որ չեն կարող թույլ տալ, քանի որ Խմբի անդամների պահանջը բավարարելու համար պետք է անցնեն ընտրական տեղամասի միջոցով: Խմբի անդամները նշել են, որ ՔԿՀ-ի աշխատակիցները չեն կարող արգելել իրենց մուտքը և դրանով խոչընդոտում են Խմբի աշխատանքներին: Խմբի անդամների դիտարկմանն ի պատասխան «Նուբարաշեն» ՔԿՀ-ի աշխատակից Հայկ Թովմասյանը հեզմանքով պատասխանել է. «Ուզում եք դարպասների վրայով անցեք»: Խմբի անդամներին այդպես էլ թույլ չեն տվել իրականացնել իրենց առաքելությունը:

Նույն օրը Խմբի անդամները, ահազանգի հիման վրա այցելել են՝ ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ: Այնտեղ նույնպես ՔԿՀ-ի աշխատակիցները դիտորդներին ներս չեն թողել՝ նշելով հետևյալը. «Ընտրություններ են, գնացեք»:

Վերոգրյալի հիման վրա ցանկանում ենք ներկայացնել մի քանի դիտարկումներ. Եթե Խմբի անդամներին ներս չեն թողել այն հիմնավորմամբ, որ քվեարկության սենյակ մուտք գործելու իրավունք չկա, ապա քվեարկության սենյակը պետք է կահավորվեր այնպես, որ նման խնդիրներ չառաջանային: Հաջորդը, ՀՀ ընտրական օրենսգիրքը հստակ սահմանել է քվեարկության սենյակում գտնվելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, այդ անձանց շրջանակը չի ներառում ՔԿՀ աշխատակիցներին, իսկ եթե Խմբի անդամները պետք է ստիպված անցնեին այդ սենյակով, ապա նշանակում է, որ ՔԿՀ աշխատակիցները նույնպես պետք է ելք ու մուտք անեն այդ սենյակով, բացի այդ ստացվում է, որ եթե որևէ կալանավորվածի պաշտպանը կամ քննիչը փորձեին հանդիպել իրենց վստահորդին կամ իրականացնել քննչական գործողություններ, ապա դա նույնպես կլիներ անհնարին: Նշվածի համատեքստում արդեն իսկ ակնհայտ են նշված ՔԿՀ-ների ոչ իրավաչափ գործողությունները: